«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգը սովորողների մեջ պատմության դասավանդման ընթացքում:

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Գրիգորյան

Դպրոց՝ Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 2

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունն առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է, իսկ կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ միտված գիտելիքների, հմտությունների տիրապետմանը, արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Այն սոցիալական նշանակություն ունեցող փորձը նախորդ սերունդներից հաջորդին փոխանցելու՝ հանրորեն կազմակերպվող ու կարգավորվող, ինչպես նաև անհատի կայացման կենսաբանասոցիալական մշտական գործընթաց է[1] , որի արդյունքն անհատի ձևավորումն է: Այն անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է:

Կրթությունը որոնում է սոցիալական խթանման, առաջնորդության և վերահսկողության միջոցով երեխային զարգացնելու բնական հնարները, որպեսզի նրանք կարողանան և տրամադրվեն առողջ, երջանիկ և բարոյական արժանի կյանք վարելու:[2] Այս առումով ՀՀ կրթական համակարգն ու ուսումնական հաստատությունները պետք է աշակերտներին պատրաստեն որպես ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ, որպեսզի մեր երեխաները զինվեն այնպիսի արժեքներով, վերաբերմունքով, հմտություններով, գիտելիքով ու քննադատական մտածողությամբ, որոնք կնպաստեն ապագայում պատասխանատու որոշումներ կայացնելուն: Սա նշանակում է, որ սովորողները պետք է իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերները և իրենց որոշումների հետևանքները: Այս ամենի համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ (կոմպետենցիաներ), արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում, որոնք անհատին անհրաժեշտ են հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Սովորողները կարող են այս կարողունակությունները ձեռք բերել ինֆորմալ և այն

[1] Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար (Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978–92–871–8575–4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, 165 էջ, էջ 6–7):

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ–Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/

հասարակության փորձառության միջոցով, որտեղ ապրում են: Դրանք նաև կարելի է սովորել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով՝ ուսուցչի աջակցությամբ: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:[3] Այս պարագայում ուսուցիչներից ակնկալվում է համակարգված և սկզբունքային եղանակով սովորելու հնարավորությունների ընձեռում, և այն կրթական վերջնարդյունքները, որոնց սովորողը պետք է հասնի, հետևանք են կարողունակությունների և դրանց համապատասխանող վարքագծերի ձևավորման: Կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթական ծրագրի (ուսումնական պլանի) կենտրոնում ուսումնառությունն ու սովորողն են՝ գիտակարգային կամ կոնկրետ առարկայական կարողունակությունների և/կամ միջառարկայական կարողունակությունների կիրառմամբ:

Կարողունակությունների դիտարկումը «ինչ է կարողանում անել սովորողը» տեսանկյունից, թույլ է տալիս կիրառել մի մոտեցում, որի առանցքը սովորողների արդյունքներն են: Այս մոտեցման մեջ կարողունակությունները (արժեքներ, վերաբերմունքներ, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում) համարվում են փոխկապակցված: Կոմպետենտ գործելու համար անձը գործի է դնում տվյալ իրավիճակին համապատասխան արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում, օրինակ՝ որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու և լուծելու կամ այլընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով: Այս ամենը կձևավորի սովորողների մեջ արժեքային համակարգ:

Արժեհամակարգի ձևավորմանն ենք անդրադառնալու այս հետազոտական աշխատանքի շրջանակում և պարզելու, թե Հայոց պատմության դասավանդման ընթացքում ինչպիսի՞ արժեհամակարգ կարելի է ձևավորել սովորողների մեջ: Սահմանենք հետազոտության նպատակը:

[3] Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015 թ. փոփոխություններով սահմանադրության համատեքստում, Ա. Վաղարշյան՝ Կրթության իրավունքի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները Երևան, Իրավունք 2016, էջ 22:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ի՞նչ արժեքային համակարգ կարելի է ձևավորել սովորողների մեջ առարկայի դասավանդման ընթացքում և ո՞ր մեթոդներն են ամենից արդյունավետը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,առաջատար փորձը

2. վերլուծել դասապրոցեսը

3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները,միջոցները, մեթոդները

4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

ԳԼՈՒԽ 1

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմության դասավանդման մեթոդիկան՝ որպես պատմական գիտելիքների դասավանդման ու դաստիարակման միջոց, մարդկությանը հայտնի է եղել դեռևս վաղ անցյալից, երբ միջցեղային կռիվների ընթացքում ցեղային ավագանին երիտասարդ ցեղերի ոգին բարձր պահելու նպատակով նրանց դաստիարակում էր պատերազմներում սխրանքներ գործած, հերոսացած ցեղակիցների օրինակով: Հետագայում, երբ ձևավորվեցին պետությունները, և հանդես եկան դասակարգերը, ունևոր վերնախավի ներկայացուցիչները տնտեսական, քաղաքական, գաղափարական առումով իրենց դիրքերը և դասային արտոնությունները ամրապնդելու նպատակով պատմական հիմնավորումների կարիք զգացին: Պատմությունը աստիճանաբար մուտք գործեց դպրոց, պատմության դասավանդման մեթոդիկան գիտական մեկնաբանության կարիք ունեցավ : Հայաստանում պատմության դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ մեզ են հասել տեղեկություններ Օղյումպ քրմից և հույն պատմիչներից, որոնք նշում են, որ Հայաստանի մեհենական դպրոցներում հունական դպրոցի նման դասավանդում էին տարբեր մեթոդներով: Քրիստոնեության ընդունումից հետո հեթանոսական սրբավայրերի, հայոց գրի ու գրականության հետ ոչնչացվեց հայ պատմամեթոդական մտքի վերաբերյալ ստեղծված ժառանգությունը: Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումից հետո հայ պատմագիտական միտքը թեև թռիչքային զարգացում ունեցավ, սակայն մեթոդական մտքի վերաբերյալ տեղեկությունները շատ աղոտ են: Խոսելով իր ուսուցչի մասին՝ Կորյունը գրում է. «Ճշմարիտ ուսուցիչները իսկապես սովոր են իրենց առաքինությունները աշակերտների համար օրինակ դարձնելու»: Պատմությունը մարդու ձևավորման և կայացման խնդիր է լուծում: Պատմության դասավանդումը պատմության ուշադրության կենտրոնում է: Կարևոր է, թե ինչպես է դասավանդվում պատմությունը:

Պատմության կրթությունն ունի նպատակներ՝ քաղաքացու դաստիարակություն, հայրենասիրություն, ազգասիրություն, փոխանցել գիտելիքներ ներկա ժամանակներում կատարվող իրողություններից, հայկական մշակութային նվաճումները համեմատել աշխարհի մշակութային նվաճումների հետ: Սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում կարևորագույն նշանակություն ունեն պատմական գիտելիքները, քանզի նրանցում է

կենտրոնացած մարդկության ողջ սոցիալական փորձը, որը անհրաժեշտ է արդի բարդ ու հակասական իրադարձությունները հասկանալու համար :

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Պատմական գիտելիքների միջոցով հնարավոր է՝

1. ձևավորել պատկերացումներ պատմական իրականության մասին,

2. ձևավորել մարդկային հասարակության զարգացման գիտական պատկերը,

3. ճանաչել ժամանակակից հասարակությունը,

4. անձի ձևավորումը:

Պատմական իմացության մեթոդաբանությունը ներառում է գիտելիքներ պատճառահետևանքային կապերի, պատմական զարգացման օրինաչափությունների մասին, ինչպես նաև պատմական նյութերի հետ աշխատելու կարողություններ: Հմտություններին և կարողություններին տիրապետելը աշակերտների ուսումնառության արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է, ինչն էլ ձևավորում է արժեքային համակարգ:

Այսպիսով, կարող ենք վստահորեն ասել. պատմական գիտելիքները պատմական պատկերացումների, հասկացությունների, պատմական զարգացման օրինաչափությունների և պատմական նյութի հետ աշխատելու միջոցների բարդ փոխկապվածություն է, որը ձևավորում է արժեքային համակարգ:

ԳԼՈՒԽ 2

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

Այս խնդիրների լուծման մի միջոց են ինտերակտիվ ուսուցման մեթոդները:

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողի ուսուցման պրոցեսին ակտիվ մասնակցությունը: Ուսուցումը պասիվ է, երբ ուսուցիչ աշակերտ հարաբերություններում ակտիվություն դրսևորում է միայն ուսուցիչը, իսկ աշակերտները պասիվ լսողի, կամ հանձնարարություններ կատարողի դերում են: Ուսուցումը դառնում է ակտիվ, երբ աշակերտները դառնում են դասապրոցեսի մասնակից, սակայն փոխազդում են միայն ուսուցչի հետ: Ուսուցումն ինտերակտիվ է, երբ աշակերտները փոխազդեցության մեջ են մտնում ինչպես ուսուցչի այնպես էլ միմյանց հետ:

Ինտերակտիվ ուսուցման հիմքը երկխոսությունն է, այն իր բնույթով համագործակցային ուսուցում է և ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը ուսուցման պրոցեսում:

Ինտերակտիվ ուսուցման համար հատկանշական են հետևյալ բնութագրիչները

- կրթության սուբյեկտների՝ ուսուցչի և աշակերտների մշտական փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- սովորողների ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնաարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապն ու անդրադարձ վերլուծությունը:

Ուսուցման արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է, երբ աշակերտներն աշխատում են բաժանվելով փոքր խմբերի (3-5 հոգի): Այն էապես մեծացնում է սովորողի ակտիվությունը: աշակերտները համատեղ լուծում են միևնույն խնդիրը, ինքնուրույն կարող են խնդիրը մասնատել առանձին տարրերի, դերերի բաշխում կատարել, քննարկել միմյանց հետ անհասկանալի հարցերը, սովորել միմյանցից ու սովորեցնել միմյանց:

Փոքր խմբերով աշխատանքի առավելություններից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր սովորող աշխատելով մյուսների հետ գիտակցում է, որ պատասխանատվություն է կրում խմբի հաջողության համար: Թիմի անհաջողությունը նաև իր անհաջողությունն է, իսկ ընդհանուր հաջողության համար կարևոր է իր ներդրումը: Այս տեսանկյունից համագործակցային ուսուցումը դաստիարակչական մեծ ներուժ ունի:

Այսօրինակ ուսուցման պարագայում ուսուցչի դերը փոխվում է. նա ոչ միայն դասավանդող է, այլ նաև և գլխավորապես, ուսուցման պրոցեսը կազմակերպող, խմբերի աշխատանքին աջակցող, նրանց գործունեությունը գնահատող, սովորողների իմացական հնարավորությունները, մտածելակերպը, արժեքային կողմնորոշումները բացահայտող, ծագած կոնֆլիկտները լուծող անձ:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ

մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: **Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա:** Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

Արժեհամակարգի ձևավորման ամենից արդյունավետ մեթոդներից է **Խմբային հետազոտության մեթոդը**

Այս մեթոդի կիրառման ընթացքում սովորողները խմբով աշխատում են որևէ թեմայի շուրջ: Մեթոդի հիմքում ընկած է սովորողների փոխօգնության և համագործակցության գաղափարը: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ այս դեպքում նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Նպատակները

սովորողները՝

- խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը,
- սովորում են համակարգված և խորությամբ հետազոտել կոնկրետ խնդիրներ,
- ամրապնդում են վերլուծական կարողությունները,
- սովորում են համագործակցել:

Այսպիսով՝ սովորողները յուրացնում են բովանդակությունը՝ զարգացնելով հետազոտական և համագործակցային աշխատանքի կարողությունները:

Ընթացքը

1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը

Ուսուցիչը կարող է ընտրել թեմաները, ապա, ըստ սովորողների ընտրության, ձևավորել խմբեր: Կարելի է նաև սկզբում ձևավորել խմբերը, ապա սովորողներին հնարավորություն տալ ընտրելու հետազոտության թեման:

2. Խմբային աշխատանքի պլանավորումը

Այս փուլում սովորողները որոշում են իրենց համատեղ աշխատանքի բովանդակային ընդգրկումը, մշակում են գործողությունների պլան, որոշում են խմբի անդամների պարտականությունները, նախանշում են այն աղբյուրները, որոնք նպաստելու են հետազոտությանը:

3. Հետազոտության իրականացումը

Սա խմբային հետազոտության ամենաերկար փուլն է: Այս փուլում սովորողները փնտրում են աղբյուրներ, նյութեր, տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչն անընդհատ պետք է պարզի, թե ինչ են անում սովորողները, ինչ աջակցության կարիք ունեն:

4. Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում

Այս փուլում ուսուցիչը պետք է ակտիվ աջակցություն ցուցաբերի: Հնարավոր է, որ սովորողները շեղվեն հետազոտության թեմայից, նրանց պետք է ուղղորդել: Կարելի է խորհուրդ տալ հետազոտության կառուցվածքի վերաբերյալ, օրինակ, աղյուսակներ, գրաֆիկներ օգտագործելու, հետազոտությունը ավելի պատկերավոր դարձնելու վերաբերյալ:

5. Հետազոտության արդյունքների ներկայացում

Այս փուլը երկու հիմնական նպատակ ունի: Սովորողները պետք է լուսաբանեն իրենց կողմից կատարված հետազոտությունը և հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնեն այն: Կատարված հետազոտությունը կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, ցուցապաստառներով, համակարգչի միջոցով, պրոյեկտորի, էլեկտրոնային գրատախտակի և այլ միջոցներով: Նախընտրելի է, երբ հնարավորինս շատ միջոցներ են օգտագործվում:

Խմբային հետազոտության գնահատումը

Խմբային հետազոտության արդյունքում գնահատվում են՝ բովանդակությունը, հետազոտական կարողությունները, խմբային աշխատանքի (համագործակցային) հմտությունները:

Բովանդակության յուրացման գնահատումը

Այս մեթոդի կիրառման կարևոր խնդիրներից է հետազոտվող նյութի բովանդակության յուրացումը: Ուսուցչի համար կարևոր է պարզել, թե սովորողները ինչ չափով են յուրացրել իրենց հետազոտած նյութը: Այդ նպատակով ուսուցիչը կարող է առանձին հարցեր ուղղել սովորողներին, կազմել հարցաթերթիկ և պահանջել լրացնել այն, ապա գնահատել, կարելի է հանձնարարել գրել շարադրություն և այլն:

Խմբի հետազոտական աշխատանքի գնահատում

Խմբի հետազոտական աշխատանքի գնահատման սանդղակ

	Կարիք ունի բարելավման	Բավարար	Լավ	Շատ լավ	Գերազանց
Հստակ դրված խնդիր	1	2	3	4	5
Հստակ ձևակերպված հիպոթեզներ	1	2	3	4	5

Արդյունավետ հավաքագրված տվյալներ	1	2	3	4	5
Տվյալների հստակ վերլուծություն 1	2	3	4	5	
Տրամաբանական եզրահանգումներ	1	2	3	4	5
Աշխատանքի հետազոտական որակը	1	2	3	4	5

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատումը

Խմբային հետազոտության ընթացքում կարևոր է սովորողների համագործակցային կարողությունների գնահատումը:

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատման սանդղակ

Հազվադեպ Միշտ

Խմբի անդամները լսում էին միմյանց 1 2 3 4 5
Խմբի անդամները փոխանցում էին իրենց ձեռքբերած տեղեկատվությունը, քննարկում գաղափարները 1 2 3 4 5
Խմբի անդամները օգնում էին միմյանց՝ հասկանալու նյութը 1 2 3 4 5
Խմբի անդամները կատարում էին խթանող հարցադրումներ 1 2 3 4 5
Խմբի անդամները պարբերաբար կիրառում էին հետադարձ կապ 1 2 3 4 5

Արժեհամակարգի ձևավորման ընթացքում կարևոր է օրինակը և օրնակներով ուսուցումը:Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: **Առաջին՝** հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով: **Երկրորդ՝** շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն, արժեհամակարգի ձևավորման մեկնարկ: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես պատմության դասերին՝

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է…

Երվանդ Քոչար

Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում:

Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա…

Դեյվիդ Հյում

Դարաշրջանի կարևոր հարցերը լուծվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ:

Հաղթողին երբեք ոչ ոք չի հարցնում արդյոք նա ճի՞շտ էր, թե՞ սխալ:

Մարդկանց կառավարելու երկու ուղի կա՝ անձնական շահ և փող:

Օ. Բիսմարկ

Այս մտքերից մի քանիսի հեղինակները դասի սկզբում չեն նշվում: Միայն դասի ավարտին են աշակերտներն իմանում, որ խոսքերի հեղինակն իրենց կողմից որոշակիորեն կոնկրետ վերաբերմունքի արժանացած այս կամ այն անհատն է: Հանրաճանաչ մարդկանց այսպիսի մեջբերումները բացի այն որ արժեհամակարգ են ձևավորում, այլ նաև ապահովում են դասի մեկնարկային սկիզբը:

Արժեհամակարգի ձևավորման հաջողված մեթոդ է **Կենտրոններով աշխատանքը:**

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Կենտրոններ.

- **հետազոտողների կենտրոն**
- **ստեղծագործողների կենտրոն**
- **գրավոր աշխատանքի կենտրոն**
- **բացահայտողների կենտրոն**

2.1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան ՝ 7--րդ

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասի թեման՝ Կենտրոնական իշխանության հզորացման փորձերը: Պապ թագավոր:

Մեթոդները՝ զրույց, դասախոսություն, կենտրոններով աշխատանք, բանավեճ:

Դասի նպատակը՝

Ձևավորել

- արժեքային համակարգ
- Պապ թագավորի գործունեության վերաբերյալ գիտելիքներ:
- Նրա գործունեությունը վերլուծելու կարողություններ:
- Գնահատելու և արժևորելու հմտություններ:

Դասի խնդիր՝ ներկայացնել՝ Պապի գործունեությունը:

վերլուծել և արժևորել նրա գործունեության արդիականությունը:

Վերջնարդյունք՝

1)Բնութագրի և համեմատի Արշակունյաց արքաների և ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը,կարծիք հայտնի նրաց գործունեության վերաբերյալ:

2)Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը հայոց պետության զորեղացման գործընթացում,կատարի եզրահանգումներ:

3)Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու,պատմական փորձի ձեռքբերումների յուրացման և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:

Դասի ընթացք՝

1)Հաշվառում,կազմակերպչական մաս

2)Ներառում:Մտագրոհ:

Հիմնական հարցադրում.

Արդյո՞ք կար բարեփոխումների կարիք:

Այսօր արդյո՞ք ունենք բարեփոխումների կարիք,եթե այո, ապա ո՞ր բնագավառներում:

Եթե ու լինեիր Պապի փոխարեն՝ ի՞նչ բարեփոխումներ կիրականացնեիր և ինչու՞:

3)Բացատրում:

Սահիկաշարի օգնությամբ ներկայացնել Պապի գործունեությունը:

Բացատրել պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները:

4)Ամրապնդում:

Ձևավորել 4 համագործակցային խմբեր:

Աշխատանք կենտրոններով

Առաջին խումբ –բացահայտողների կենտրոն

Ներկայացնել՝ Պապի գործունեությունը կարևոր իրադարձությունները/Տ-աձև աղյուսակի միջոցով/գործունեության դրական և բացասական կողմերը:

Երկրորդ Խումբ – հետազոտողների կենտրոն

Ներկայացնել՝ Պապի գործունեությունը հետ առնչվող լրացուցիչ տեղեկություններ:

Երրորդ խումբ- ստեղծագործողների կենտրոն/թեման ներկայացնեն իրենց նախընտրած ձևով/

Չորրորդ –խումբ-գրավոր աշխատանքի կենտրոն: /կազմել 10հարցեր/

5) իրականացնում ենք բանավեճ . վերնագիրը ՝ **«ՊԱՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»**

6)Գնահատում:

Կատարել անդրադարձ և գնահատել աշակերտներին նախապես կազմված գնահատման աղյուսակով, որը նշված է նախորդ բաժնում:

7) Սովորողները լրացնում են հարցաթերթիկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ճիշտ ընտրած մեթոդն է դասի նպատակին հասնելու հաջողության գրավականը:

2. Ինտերակտիվ ուսուցումը հնարավորություն է տալիս դասը կազմակերպել արդյունավետ:

3. Սովորողների վրա դրական ազդեցություն ունեցավ մեր նպատակաուղղված, հետազոտական աշխատանքը :

4. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել համագործակցելու կարողությունների ,արժեքային համակարգի ձևավորման գործընթացը , երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

5. Պատմական գիտելիքները պատմական պատկերացումների, հասկացությունների, պատմական զարգացման օրինաչափությունների և պատմական նյութի հետ աշխատելու միջոցների բարդ փոխկապվածություն է, որը ձևավորում է արժեքային համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թամամյան Գ., Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, Եր., 1972,

2.Խաչատրյան Ս.,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 12,

3.Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար (Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978–92–871–8575–4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, 165 էջ,

4.Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» 2006, էջ 13

5.Հանրակրթության պետական չափորոշիչ–Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/,

6. Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015 թ. փոփոխություններով սահմանադրության

համատեքստում, Ա. Վաղարշյան՝ Կրթության իրավունքի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները Երևան, Իրավունք 2016:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Անուն, ազգանուն, դասարան ----------

1.Հաճելի է արդյո՞ք խմբերով աշխատելը.

o շատ

o բավականին

o ոչ այդքան

Ինչո՞ւ----------

---

2. Կուզե՞ս, որ դասը վարես ընկերոջդ հետ.

o այո

o ոչ

Ինչո՞ւ----------

3. Կուզե՞ս ինքդ հանդես գալ որպես ուսուցիչ

o այո

o ոչ

Ինչո՞ւ----------

4. սիրում ես սովորել, թե սովորեցնել,ինչու՞, մանրամասնիր երկու դեպքում էլ:

5. Ի՞նչ սովորեցիր այս դասի ընթացքում: